**Договор №УЧ02- 14**
**о практической подготовке обучающихся**

**Պայմանագիր №УЧ02-14**
**ուսանողների գործնական ուսուցման մասին**

**г. Ереван** **« 21 » марта 2024г.**

**Филиал Московского государственного университета имени М.В. Ломоносова в г. Ереван**, именуемый в дальнейшем **«Организация»**, в лице Исполнительного директора Павла Дантоновича Сафаряна, действующего на основании доверенности № 375-23/010-50 от 19.12.2023г. (далее - Филиал), выданной федеральным государственным бюджетным образовательным учреждением высшего образования «Московский государственный университет имени М.В.Ломоносова» (ИНН 7729082090, адрес: 119991, г.Москва, Ленинские Горы, д.1), в лице Ректора В. А. Садовничего, с одной стороны, и **ЗАО «Ереванский коньячный завод»**, именуемое в дальнейшем **«Профильная организация»**, в лице директора по управлению персоналом Элизы Мармарян, действующей на основании доверенности Исполнительного директора общества № L-23/026 от 12.12.2023, с другой стороны, именуемые по отдельности **«Сторона»**, а вместе – **«Стороны»**, заключили настоящий договор, именуемый в дальнейшем **«Договор»**, о нижеследующем:

**ք. Երևան** **« 21 » մարտի 2024թ.**

Երևան քաղաքում Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղը, այսուհետ՝ **«Կազմակերպություն»**, ի դեմս Գործադիր տնօրեն Պավել Դանտոնի Սաֆարյանի, ով գործում է 19.12.2023թ.-ին «Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան» բարձրագույն կրթության դաշնային պետական բյուջետային ուսումնական հաստատության կողմից (ՀՎՀՀ 7729082090, адрес: 119991, ք. Մոսկվա, Լենինսկիյե գոռը, շ.1) ի դեմս ռեկտոր Վ.Ա. Սադովնիչիի տրված № 375-23/010-50 լիազորագրի հիման վրա, մի կողմից, և **«Երևանի կոնյակի գործարան» ՓԲ ընկերությունը**, այսուհետ՝ **«Մասնագիտական կազմակերպություն»**, ի դեմս մարդկային ռեսուրսների կառավարման գծով տնօրեն Էլիզա Մարմարյանի, ով գործում է ընկերության Գործադիր տնօրենի կողմից 12.12.2023թ.-ին տրված № L-23/026 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, այսուհետ առանձին հիշատակման դեպքում՝ **«Կողմ»**, իսկ միասին՝ **«Կողմեր»**, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ **«Պայմանագիր»**, հետևյալի մասին.

## 1. ПРЕДМЕТ ДОГОВОРА

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Предметом настоящего Договора является организация практической подготовки обучающихся (далее: **«Практическая подготовка»**).

Սույն Պայմանագրի առարկա է հանդիսանում ուսանողների գործնական ուսուցման կազմակերպումը (այսուհետ՝ **«Գործնական ուսուցում»**)։

2. Образовательная программа (программы), компоненты образовательной программы, при реализации которых организуется Практическая подготовка, количество обучающихся, осваивающих соответствующие компоненты образовательной программы, сроки организации практической подготовки, согласуются Сторонами в соответствии с Приложением 1 (далее: **«Приложение № 1»**), которое является неотъемлемой частью настоящего Договора.

Կրթական ծրագիրը (ծրագրերը), կրթական ծրագրի բաղադրիչները, որոնց իրականացման ընթացքում կազմակերպվում է Գործնական ուսուցումը, ուսանողների քանակը, կրթական ծրագրի համապատասխան բաղադրիչների յուրացումը, գործնական ուսուցման ժամանակացույցի կազմակերպումը համաձայնեցվում են Կողմերի կողմից՝ համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ի (այսուհետ՝ **«Հավելված № 1»**)։

3. Реализация компонентов образовательной программы, согласованных Сторонами в Приложении

Կրթական ծրագրի բաղադրիչների կազմակերպումը, որոնք համաձայնեցված են Կողմերի կողմից Հավելված № 1-ով

№ 1 к настоящему Договору (далее: **«Компоненты образовательной программы»**), осуществляется в помещениях Профильной организации, перечень которых согласуется Сторонами в соответствии с Приложением 2 (далее: **«Приложение № 2»**), которое является неотъемлемой частью настоящего Договора.

սահմանված կարգով (այսուհետ՝ **«Կրթական ծրագրի բաղադրիչներ»**), իրականացվում են Մասնագիտական կազմակերպության տարածքներում, որոնց ցուցակը համաձայնեցվում է Կողմերի կողմից՝ համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 2-ի (այսուհետ՝ **«Հավելված № 2»**):

## 2. ПРАВА И ОБЯЗАННОСТИ СТОРОН

## ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Организация обязана:

Կազմակերպությունը պարտավորվում է՝

2.1.1. не позднее, чем за 10 (десяти) рабочих дней до начала Практической подготовки по каждому Компоненту образовательной программы представить в Профильную организацию поименные списки обучающихся, осваивающих соответствующие Компоненты образовательной программы посредством Практической подготовки;

Մասնագիտական կազմակերպություն ներկայացնել ուսանողների անվանական ցուցակը, ովքեր յուրացնում են Գործնական ուսուցման ձևով Կրթական ծրագրի համապատասխան բաղադրիչները՝ Կրթական ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի համար Գործնական ուսուցման սկզբից ոչ ուշ, քան 10 (տասը) աշխատանքային օր առաջ,

2.1.2. назначить руководителя по практической подготовке от Организации, который:

Նշանակել Կազմակերպության կողմից գործնական ուսուցման ղեկավար, որը՝

2.1.2.1. обеспечивает Организацию образовательной деятельности в форме Практической подготовки при реализации Компонентов образовательной программы;

ապահովում է կրթական գործունեության կազմակերպումը Գործնական ուսուցման ձևով Կրթական ծրագրի բաղադրիչների իրականացման ընթացքում,

2.1.2.2. организует участие обучающихся в выполнении определенных видов работ, связанных с будущей профессиональной деятельностью;

կազմակերպում է ուսանողների մասնակցությունը հստակ աշխատանքների կատարմանը՝ կապված ապագա մասնագիտական գործունեության հետ,

2.1.2.3. оказывает методическую помощь обучающимся при выполнении определенных видов работ, связанных с будущей профессиональной деятельностью;

տրամադրում է մեթոդական աջակցություն ուսանողների հստակ աշխատանքների կատարմանը՝ կապված ապագա մասնագիտական գործունեության հետ,

2.1.3. при смене руководителя по Практической подготовке в 10 (десяти) дневный срок сообщить об этом Профильной организации;

10 (տասը) օրվա ընթացքում տեղեկացնել Մասնագիտական կազմակերպությանը գործնական ուսուցման ղեկավարի փոփոխության մասին,

2.1.4. установить виды учебной деятельности, практики и иные компоненты образовательной программы, осваиваемые обучающими в форме Практической подготовки, включая место, продолжительность и период их реализации;

սահմանել ուսումնական գործունեության ձևերը, պրակտիկային և կրթական ծրագրի այլ բաղադրիչները, որոնք ուսանողները յուրացնում են Գործնական ուսուցման ընթացքում, ներառյալ վայրը, տևողությունը և դրանց իրականացման ժամանակահատվածը,

2.1.5. направить обучающихся в Профильную организацию для освоения Компонентов образовательной программы в форме Практической подготовки в сроки, предусмотренные календарным планом-графиком прохождения практики.

գործուղել ուսանողներին Մասնագիտական կազմակերպություն՝ Գործնական ուսուցման ձևով Կրթական ծրագրի բաղադրիչների յուրացման նպատակով այն ժամանակահատվածում, որը նախատեսված է պրակտիկայի անցկացման օրացուցային պլան-գրաֆիկով:

| | | |
|---|---|---|
| 2.2. | **Профильная организация обязана:** | **Մասնագիտական կազմակերպությունը պարտավորվում է՝** |
| 2.2.1. | создать условия для реализации Компонентов образовательной программы в форме Практической подготовки, предоставить оборудование и технические средства обучения в объеме, позволяющем выполнять определенные виды работ, связанные с будущей профессиональной деятельностью обучающихся; | ստեղծել պայմաններ Գործնական ուսուցման ձևով Կրթական ծրագրի բաղադրիչների իրականացման համար՝ տրամադրել սարքավորումներ և տեխնիկական միջոցներ այն ծավալով, որը թույլ է տալիս հստակ աշխատանքներ կատարել՝ կապված ուսանողի գործնական ուսուցման հետ, |
| 2.2.2. | назначить руководителя практики квалифицированного специалиста, для координации работы и оказания содействия студентам-практикантам в прохождении практики; | որպես պրակտիկայի ղեկավար նշանակել որակավորված մասնագետի՝ աշխատանքի համակարգման և պրակտիկայի անցկացման ընթացքում ուսանող-պրակտիկանտներին աջակցություն ցուցաբերելու համար, |
| 2.2.3. | при смене руководителя практики, указанного в пункте 2.2.2. настоящего Договора, сообщить об этом Организации в 10 (десяти) дневный срок; | սույն Պայմանագրի 2.2.2. կետում նշված պրակտիկայի ղեկավարի փոփոխության դեպքում տեղեկացնել Կազմակերպությանը այդ մասին 10 (տասը) օրվա ընթացքում, |
| 2.2.4. | обеспечить безопасные условия реализации Компонентов образовательной программы в форме Практической подготовки: выполнение правил противопожарной безопасности, правил охраны труда, техники безопасности и санитарно-эпидемиологических правил и гигиенических нормативов; | ապահովել Գործնական ուսուցման ձևով Կրթական ծրագրի բաղադրիչների իրականացման համար անվտանգ պայմաններ. հակահրդեհային անվտանգության կանոնների իրականացում, աշխատանքի անվտանգության կանոնների, անվտանգության տեխնիկայի և սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների և հիգիենիկ նորմատիվների իրականացում, |
| 2.2.5. | проводить оценку условий труда на рабочих местах, используемых при реализации компонентов образовательной программы в форме практической подготовки, и сообщать руководителю Организации об условиях труда и требованиях охраны труда на рабочем месте; | գնահատել աշխատավայրում աշխատանքային պայմանները, որոնք օգտագործվում են գործնական ուսուցման ձևով կրթական ծրագրի բաղադրիչների իրականացման ընթացքում և Կազմակերպության ղեկավարին տեղեկացնել աշխատավայրում աշխատանքային պայմանների և անվտանգության պահանջների մասին, |
| 2.2.6. | ознакомить обучающихся с правилами внутреннего трудового распорядка Профильной организации; | ծանոթացնել ուսանողներին Մասնագիտական կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, |
| 2.2.7. | провести инструктаж обучающихся по охране труда и технике безопасности и осуществлять надзор за соблюдением обучающимися правил техники безопасности; | ծանոթացնել ուսանողներին աշխատանքային և անվտանգության կանոններին և իրականացնել ուսանողների կողմից անվտանգության կանոնների պահպանման վերահսկողություն, |
| 2.2.8. | предоставить обучающимся и руководителю по Практической подготовке от Организации возможность пользоваться помещениями Профильной организации, согласованными Сторонами (Приложение № 2), а также находящимися | հնարավորություն ընձեռել ուսանողներին և Կազմակերպության կողմից նշանակված Գործնական ուսուցման ղեկավարին օգտվել Մասնագիտական կազմակերպության Կողմերի կողմից համաձայնեցված տարածքից (Հավելված № 2), ինչպես նաև |

| | | |
|---|---|---|
| | в них оборудованием и техническими средствами обучения; | սարքավորումներից և ուսուցման համար նախատեսված տեխնիկական միջոցներից, |
| 2.2.9. | обо всех случаях нарушения обучающимися правил внутреннего трудового распорядка, охраны труда и техники безопасности сообщить руководителю по практической подготовке от Организации. | ուսանողների կողմից յուրաքանչյուր անգամ ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, աշխատանքային անվտանգության կանոնների խախտման դեպքում իրազեկել Կազմակերպության կողմից նշանակված Գործնական ուսուցման ղեկավարին: |
| 2.3. | **Организация имеет право:** | **Կազմակերպությունն իրավունք ունի՝** |
| 2.3.1. | осуществлять контроль соответствия условий реализации Компонентов образовательной программы в форме Практической подготовки требованиям настоящего Договора; | իրականացնել վերահսկողություն սույն Պայմանագրով սահմանված պահանջներին Գործնական ուսուցման ձևով Կրթական ծրագրի բաղադրիչների իրականացման պայմանների համապատասխանության ապահովման նպատակով, |
| 2.3.2. | запрашивать информацию об организации Практической подготовки, в том числе о качестве и объеме выполненных обучающимися работ, связанных с будущей профессиональной деятельностью. | պահանջել տեղեկատվություն Գործնական ուսուցման կազմակերպման, ներառյալ կատարված աշխատանքի որակի և ծավալի մասին՝ կապված ապագա մասնագիտական գործունեության հետ: |
| 2.4. | **Профильная организация имеет право:** | **Մասնագիտական կազմակերպությունն իրավունք ունի՝** |
| 2.4.1. | требовать от обучающихся соблюдения правил внутреннего трудового распорядка, охраны труда и техники безопасности, режима конфиденциальности, принятого в Профильной организации, предпринимать необходимые действия, направленные на предотвращение ситуации, способствующей разглашению конфиденциальной информации; | պահանջել ուսանողներից պահպանել ներքին աշխատանքային կարգապահական կանոնները, աշխատանքի և տեխնիկայի անվտանգության կանոնները, գաղտնիության ռեժիմը, որը ընդունված է Մասնագիտական կազմակերպության կողմից, ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ գաղտնի տեղեկատվության բացահայտմանը նպաստող իրավիճակի կանխարգելմանը, |
| 2.4.2. | в случае установления факта нарушения обучающимися своих обязанностей в период организации Практической подготовки, режима конфиденциальности приостановить реализацию Компонентов образовательной программы в форме Практической подготовки в отношении конкретного обучающегося. | դադարեցնել Գործնական ուսուցման ձևով Կրթական ծրագրի բաղադրիչների իրականացումը կոնկրետ ուսանողի հետ, եթե պարզվում է, որ ուսանողները խախտել են իրենց պարտականությունները՝ գաղտնիության ռեժիմի հետ կապված, գործնական ուսուցման կազմակերպման ընթացքում: |
| 3. | ОБСТОЯТЕЛЬСТВА НЕПРЕОДОЛИМОЙ СИЛЫ (ФОРС-МАЖОР) | ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ |

3.1. Стороны освобождаются от ответственности за частичное или полное неисполнение обязательств по настоящему Договору, если это неисполнение явилось следствием форс-мажорных обстоятельств, которые наступили независимо от воли Сторон.

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե նման ոչ պատշաճ կատարումը հանդիսացել է ֆորս մաժորային հանգամանքների հետևանք, որը վրա է հասել Կողմերի կամքից անկախ:

3.2. Под форс-мажорными обстоятельствами подразумеваются внешние чрезвычайные события, регулятивные изменения, непосредственно влияющие на исполнение договорных обязательств, которые наступили независимо от воли Сторон (пожары, землетрясения, наводнения, эпидемии, аварии, взрывы, несчастные случаи, массовые забастовки, массовые беспорядки, волнения гражданского населения, действия враждебных сил, война; а также постановления, акты, решения органов власти всех уровней, как законные, так и незаконные; предписания судебных органов), а так же все другие события и обстоятельства, которые будут признаны форс-мажорными, в соответствии с законом.

Ֆորս մաժորային հանգամանքների շարքին են դասվում արտաքին արտակարգ իրադարձությունները, պայմանագրային պարտավորությունների կատարման վրա անմիջապես ազդեցություն ունեցող կարգավորիչ փոփոխությունները, որոնք վրա են հասել անկախ Կողմերի կամքից (հրդեհներ, երկրաշարժներ, ջրհեղեղներ, համաճարակներ, դժբախտ պատահարներ, պայթյունները, վթարներ, զանգվածային գործադուլներ, մասսայական անկարգություններ, քաղաքացիական բնակչության հուզումներ, թշնամական ուժերի գործողություններ, պատերազմ, բոլոր մակարդակների կառավարության մարմիններ որոշումներ, դատական մարմինների կանոնակարգեր), ինչպես նաև մյուս բոլոր իրադարձությունները և հանգամանքները, որոնք օրենքով սահմանված կարգով կճանաչվեն և կհայտարարվեն անհաղթահարելի ուժի դեպքեր:

3.3. О наступлении форс-мажорных обстоятельств и их прекращении каждая Сторона должна известить другую Сторону в письменной форме в течение 5 (пяти) дней с момента их возникновения и прекращения соответственно.

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է գրավոր կերպով ծանուցի մյուս Կողմին Ֆորս մաժորային հանգամանքների վրա հասնելու և դրանց դադարման մասին՝ վրա հասնելու և համապատասխանաբար դադարման օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3.4. В случае возникновения форс-мажорных обстоятельств, срок выполнения обязательств по настоящему Договору сдвигается соразмерно времени, в течение которого действуют такие обстоятельства и их последствия.

Ֆորս մաժորային հանգամանքների ի հայտ գալու դեպքում պարտավորությունների կատարման ժամկետները հետաձգվում են այդ հանգամանքների և դրանց հետևանքների գործողության ժամանակին համաչափորեն:

3.5. Если форс мажор и его последствия длятся более чем 3 (три) месяца, Стороны обязуются в кротчайшие сроки переговорить, чтобы найти взаимоприемлемые альтернативы настоящему Договору и принять решение о расторжении или исполнении настоящего Договора.

Եթե ֆորս մաժորային հանգամանքների հետևանքների գործողությունը շարունակվում է ավելի քան երեք ամիս, Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը այդ մասին նախապես գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

## 4. АНТИКОРРУПЦИОННЫЕ И ПРЕДЪЯВЛЯЕМЫЕ ПО БОРЬБЕ С ОТМЫВАНИЕМ ДЕНЕГ ТРЕБОВАНИЯ

## ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

4.1. Каждая Сторона гарантирует и заверяет, что в рамках сотрудничества:

Կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում և հավաստիացնում է, որ համագործակցության շրջանակներում.

- осуществляемая с их сторон деятельность соответствует и всегда будет соответствовать действующему применимому законодательству (включая, но не ограничиваясь: законодательству, связанному с регулированием вопросов о контрабандных или поддельных товарах; антикоррупционному и по борьбе с терроризмом; регулирующего вопросы экономических санкций и запрета бойкотов).

իր կողմից իրականացվող գործունեությունը համապատասխանում է և մշտապես համապատասխանելու է գործող կիրառելի օրենսդրությանը (ներառյալ, բայց չսահմանափակելով՝ մաքսանենգ կամ կեղծ ապրանքների, կոռուպցիայի և ահաբեկչության դեմ պայքարի, շահերի բախման, տնտեսական պատժամիջոցների, բոյկոտների արգելման վերաբերվող օրենսդրությանը),

- прямо либо косвенно не предоставят какое-либо отчисление, подарок, взятку, скидку, выплату, предпринимательскую взятку, влияющую/упрощающую либо любую иную выплату в виде денежных средств, имущества либо услуги, которые будут направлены на получение благоприятного отношения либо обеспечения заключения договора, соглашения либо обязательства, оплату уже полученного благоприятного отношения либо за обеспеченного заключения договора, соглашения либо обязательства, получение специальной концессии либо за полученную специальную концессию и нарушит антикоррупционное законодательство либо иные административные требования, которые могут быть применены в отношении них.

ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի տրամադրի որևէ հատկացում, նվեր, կաշառք, զեղչ, վճար, առևտրային կաշառք, ազդող/հեշտացնող կամ որևէ այլ վճարում որևէ մասնավոր և/ կամ հանրային անձին՝ դրամական միջոցների, գույքի, ծառայությունների ձևով, որն ուղղված կլինի՝ նպաստավոր վերաբերմունք, հատուկ կոնցեսիա ստանալուն, որևէ գործարքի կնքումն ապահովելուն, ինչպես նաև արդեն իսկ ստացած նպաստավոր վերաբերմունքի, կոնցեսիայի, կնքումն ապահովված գործարքի դիմաց վճարելուն և չի խախտի հակակոռուպցիոն օրենսդրության և/ կամ այլ վարչական պահանջները, որոնք կարող են կիրառելի լինել իր նկատմամբ,

- их деятельность и деятельность аффилированных с ними лиц соответствует и всегда будет соответствовать всему действующему применимому законодательству по борьбе с отмыванием денег (включая, но ограничиваясь требованиям финансового учета либо финансового отчета), которые установлены либо применяются соответствующим государственным органом; против них либо против лиц, аффилированных с ними, в каком-либо суде либо государственном органе либо арбитраже, не расследуется либо не планируется дело, производство либо процесс, связанное с

իր և իր հետ փոխկապակցված անձանց գործունեությունը համապատասխանում է և մշտապես համապատասխանելու է գործող կիրառելի փողերի լվացման դեմ պայքարին ուղղված օրենսդրությանը (ներառյալ, բայց չսահմանափակելով՝ ֆինանսական հաշվառման և/ կամ հաշվետվության վերաբերվող օրենսդրությանը), որը սահմանվել է և/ կամ կիրառվում է համապատասխան պետական մարմնի կողմից, իր և իր հետ փոխկապակցված անձանց դեմ որևէ դատարանում, արբիտրաժում, պետական մարմնում չի քննվում կամ նախատեսվում որևէ գործ, վարույթ, գործընթաց՝ կապված վերջինիս կողմից փողերի լվացման դեմ պայքարին վերաբերվող օրենսդրության խախտման հետ:

нарушением со стороны последних законодательства по борьбе с отмыванием денег.

4.2. Каждая Сторона имеет право односторонним письменным уведомлением (которое вступает в силу сразу же) приостановить сотрудничество с другой Стороной (включая, но не ограничиваясь: расторгнуть все действующие контракты/сделки) , если разумно и добросовестно считает, что другая Сторона, представитель последнего (включая, но не ограничиваясь: директора′, должностные лица, агенты либо работники), а также аффилированные с ним лица вовлечены либо были вовлечены в какую-либо сделку, которая нарушает действующее применяемое законодательство (включая, но не ограничиваясь: Антикоррупционное законодательство либо Законодательство по борьбе с отмыванием денег); в том числе нарушение представленного в настоящем разделе какого-либо заверения и/или гарантии, либо может создать риск ответственности первой Стороны, в части вышеуказанного законодательства.

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի գրավոր ծանուցմամբ (որն ուժի մեջ է մտնում անմիջապես) դադարեցնել մյուս Կողմի հետ համագործակցությունը (ներառյալ, բայց չսահմանափակելով՝ լուծել կնքված բոլոր գործարքները), եթե ողջամտորեն և բարեխղճորեն գտնի, որ վերջինս, նրա հետ փոխկապակցված անձիք, նրանց ներկայացուցիչները (ներառյալ, բայց չսահմանափակելով՝ տնօրենները, պաշտոնատար, լիազորված անձինք, աշխատակիցները) ներգրավված են կամ ներգրավված են եղել որևէ գործընթացի/ գործարքի մեջ, որը խախտում է գործող կիրառելի օրենսդրությունը (ներառյալ, բայց չսահմանափակելով՝ հակակոռուպցիոն և/ կամ փողերի լվացման դեմ պայքարին վերաբերվող օրենսդրությունը)՝այդ թվում սույն գլխում ներկայացված որևէ երաշխավորության և/ կամ հավաստիացման խախտմամբ, կամ կարող է նրանց համար պատասխանատվության ռիսկ առաջացնել վերոնշյալ օրենսդրության մասով:

## 5. ЗАШИТА ПЕРСОНАЛЬНЫХ ДАННЫХ

## ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

5.1. Во время срока действия настоящего Договора Организация обязуется собирать, вводить, организовать или иными способами обрабатывать персональные данные, в особенности общедоступные данные слушателей/сотрудников Профильной организации (имя, фамилия) в том минимальном количестве, необходимом для исполнения Договора, и обрабатывать персональные данные согласно законодательству РА, в частности:

Պայմանագրի գործողության ընթացքում Կազմակերպությունը պարտավորվում է Պայմանագրի համաձայն հավաքել, մուտքագրել, համակարգել կամ այլ կերպ մշակել անձնական տվյալները՝ մասնավորապես Մասնագիտական կազմակերպության աշխատակիցների հանրամատչելի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամիսը, ամսաթիվը) այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է Պայմանագրով սահմանված Ծառայությունների պատշաճ մատուցման համար, և կատարել անձնական տվյալների մշակումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնավորապես՝

5.1.1. Обрабатывать персональные данные исключительно в целях исполнения обязательств по настоящему Договору,

Ցանձնական տվյալները մշակել բացառապես սույն Պայմանագրում սահմանված պարտավորությունների կատարման նպատակով,

5.1.2. Предотвращать доступность систем, содержавших персональные данные лицам, не только лицам, уполномоченным для надлежавшего выполнения Договора, и обеспечить, чтобы:

կանխել անձնական տվյալներ պարունակող համակարգերի մատչելիությունը դրա իրավունքը չունեցող աշխատակիցների համար և ապահովել, որ անձնական տվյալները հասանելի լինեն միայն Պայմանագրի պատշաճ

| | | |
|---|---|---|
| | I. Эти сотрудники подписали соглашения о конфиденциальности, защите персональных данных и защите данных, которые включают обязательства, как минимум изложенные в Договоре,<br>II. Обрабатывать персональные данные только по поручению Профильной организации или согласно законодательству. | կատարման համար լիազորված աշխատակիցներին, և երաշխավորել, որ.<br>Ա. այդ աշխատակիցները ստորագրել են գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության և տվյալների պաշտպանության մասին նվազագույնը Պայմանագրով սահմանված պարտավորություններ ներառող պայմանագրեր,<br>Բ. անձնական տվյալները մշակել միայն Մասնագիտական կազմակերպության հրահանգավորումներով, կամ օրենքով պահանջվող կարգով, |
| 5.1.3. | имеющим на это право и обеспечить, чтобы персональные данные были доступны | օգտագործել համապատասխան գաղտնագրման միջոցներ անձնական տվյալների պաշտպանությունը հնարավոր խախտումներից ապահովելու համար և երաշխավորել համապատասխան անվտանգության մակարդակը, |
| 5.1.4. | Использовать соответствующие меры шифрования, чтобы обеспечить защиту персональных | ոչնչացնել բոլոր անձնական տվյալները Պայմանագրի գործողության ավարտից հետո, |
| 6. | **ЗАЩИТА ПРАВ ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ** | **ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** |
| 6.1. | Организация обязуется полностью воздержаться от любого использования (и/или любых других видов деятельности) товарных знаков и/или объектов исключительных имущественных прав Профильной организации без предварительно письменного согласия последнего, за исключением такого использования, которое Организация осуществляет согласно настоящему Договору, на его условиях и сроках действия. | Կազմակերպությունը պարտավորվում է զերծ մնալ Մասնագիտական կազմակերպության ապրանքանիշների և/կամ բացառիկ սեփականության իրավունք հանդիսացող առարկաների օգտագործումից (և /կամ որևէ այլ գործունեության ձևից)՝ առանց վերջինիս նախնական գրավոր համաձայնության ձեռքբերման՝ բացառությամբ այնպիսի օգտագործումից, որը Կազմակերպությունը իրականացնում է սույն Պայմանագրին համաձայն կարգով, դրա ժամկետների և պայմանների շրջանակներում: |
| 6.2. | Организация обязуется: | Կազմակերությունը պարտավորվում է՝ |
| 6.2.1. | не нарушать права интеллектуальной собственности Профильной организации; | չխախտել Մասնագիտական կազմակերպության մտավոր սեփականության իրավունքները, |
| 6.2.2. | никогда не пытаться подавать заявку на регистрацию и/или регистрировать объекты таких прав; | երբեք չփորձել գրանցման հայտ ներկայացնել և /կամ գրանցել նման իրավունքների առարկաները, |
| 6.2.3. | не включать объекты таких прав в товарные знаки, промышленные образцы, наименования доменов, зарегистрированных на имя Профильной организации. | չներառել այդպիսի իրավունքների օբյեկտները իր անունով գրանցված ապրանքային նշաններում, արտադրական նմուշներում, դոմեյնների անվանումներում: |
| 7. | **КОНФИДЕНЦИАЛЬНОСТЬ** | **ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ** |
| 7.1. | Стороны настоящим обязуются сохранять конфиденциальность всей информации, полученной | Կողմերը սույնով պարտավորվում են պահպանել մյուս Կողմից կամ նրա անունից գործող երրորդ կողմերից |

от другой Стороны или действующих от ее имени третьих лиц, и касающейся условий настоящего Договора, Заказов, Спецификаций, проектов и планов, финансового состояния, предпринимательской, маркетинговой и производственной деятельности, ноу-хау, чертежей, дизайнов и иных объектов промышленной собственности и клиентской базы данной Стороны, либо любой другой информации приобретаемой Сторонами в течение исполнения настоящего Договора (именуемой в дальнейшем «Конфиденциальная информация»). Существование настоящего Договора и делового сотрудничества между Сторонами также является Конфиденциальной информацией. Продавец гарантирует, что все задействованные им третьи лица и иные агенты, которым Конфиденциальная информация должна быть предоставлена для исполнения Организацией настоящего Договора, будут нести обязательства по конфиденциальности аналогичные тем, что установлены настоящим разделом Договора, и Продавец будет нести ответственность за нарушение ими данных обязательств в том же объеме, как если бы данное нарушение было допущено им.

ստացված և սույն Պայմանագրին, Հայտերին, Տեխնիկական առաջադրանքներին, նախագծերին և ծրագրերին, ֆինանսական վիճակին, ձեռնարկատիրական, մարկետինգային և արտադրական գործունեությանը, նոու-հաուին, գծագրերին, ձևավորումներին և այլ արդյունաբերական սեփականության առարկաներին և Կողմի հաճախորդների տեղեկատվական բազային վերաբերող բոլոր տեղեկությունների գաղտնիությունը, ինչպես նաև սույն Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի ստացած ցանկացած այլ տեղեկատվության գաղտնիությունը (այսուհետ՝ «Գաղտնի տեղեկատվություն»): Կազմակերպությունը երաշխավորում է, որ իր կողմից ներգրավված բոլոր երրորդ անձիք և այլ գործակալները, որոնց պետք է տրամադրվի Գաղտնի տեղեկատվությունը Կազմակերպության կողմից սույն Պայմանագրի կատարման նպատակով, կկրեն սույն Պայմանագրի 7-րդ գլխով սահմանված գաղտնիության պարտավորությանը հավասարազոր պարտավորություն, իսկ Կազմակերպությունը պատասխանատու կլինի այդ պարտավորությունների խախտման համար նույն չափով, որքան եթե խախտումը թույլ տրվեր իր կողմից:

7.2. Стороны обязуются не использовать Конфиденциальную информацию вне рамок настоящего Договора, и не копировать, распространять, предоставлять или иным образом делать ее доступной для третьих лиц без предварительного письменного согласия другой Стороны (кроме случаев, прямо предусмотренных пунктом 7.3. настоящего Договора). Приэтом, разрешение на предоставление не может предполагать передачи каких-либо прав на соответствующую Конфиденциальную информацию.

Կողմերը պարտավորվում են չօգտագործել Գաղտնի տեղեկատվությունը սույն Պայմանագրի շրջանակներից դուրս, և չպատճենել, հրապարակել, տրամադրել կամ որևէ կերպ հասանելի դարձնել ցանկացած երրորդ կողմի առանց հակառակ Կողմի գրավոր համաձայնության առկայության (բացառությամբ սույն Պայմանագրի 7.3. կետով ուղղակիորեն նախատեսվող դեպքերի): Ընդ որում, տրամադրման թույլատվությունը չի ենթադրում համապատասխան Գաղտնի տեղեկատվության որևէ սեփականության իրավունքի փոխանցում:

7.3. Сторона вправе предоставлять Конфиденциальную информацию в тех случаях, когда это требуется от нее в силу закона, по решению суда или иному обязательному к исполнению акту правомочных государственных или муниципальных органов, которые не могут быть разумно обжалованы в рамках

Կողմը իրավունք ունի տրամադրել Գաղտնի Տեղեկատվությունը այն դեպքերում, երբ դա պահանջվում է օրենքով, դատարանի որոշմամբ կամ իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այլ պարտադիր կատարման ակտով, որոնք չեն կարող ողջամտորեն օրենքով բողոքարկվել, մյուս Կողմին այդ

| | | |
|---|---|---|
| | закона, и при условии предварительного уведомления другой Стороне о подобном предоставлении. Также Профильная организация вправе свободно предоставлять Конфиденциальную Информацию компаниям из его группы. | տրամադրման մասին նախապես գրավոր ծանուցման պայմանով: Մասնագիտական կազմակերպությունը նաև իրավունք ունի ազատորեն տրամադրելու Գաղտնի տեղեկատվությունը իր խմբի ընկերություններին: |
| 7.4. | За нарушение обязательств, предусмотренных настоящим разделом, виновная Сторона возмещает другой Стороне все документально подтвержденные убытки. | Սույն Պայմանագրի 7-րդ գլխով սահմանված պարտավորությունների խախտման դեպքում պատասխանատու Կողմը փոխհատուցում է մյուս Կողմին բոլոր փաստաթղթերով հիմնավորված կորուստների դիմաց: |
| 7.5. | Положения настоящего раздела о Конфиденциальной информации являются обязательными для Сторон бессрочно. | Սույն Պայմանագրի 7-րդ գլխով սահմանված Գաղտնի տեղեկատվության դրույթները պարտադիր են Կողմերի համար ինչպես սույն Պայմանագրի գործողության ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո անորոշ ժամկետով: |
| 8. | СРОК ДЕЙСТВИЯ ДОГОВОРА | ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ |
| 8.1. | Настоящий Договор вступает в силу после его подписания Сторонами и действует до 30 июня 2026г. включительно. | Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2026 թվականի հունիսի 30-ը ներառյալ: |
| 8.2. | Настоящий Договор может быть расторгнут по инициативе одной из Сторон. | Սույն Պայմանագիրը կարող է Կողմերից մեկի նախաձեռնությամբ վաղաժամկետ դադարեցվել: |
| 8.3. | При расторжении Договора Стороны обязаны известить об этом друг друга, не позднее чем за 3 (три) мясца до расторжения. | Պայմանագիրը լուծարելու դեպքում Կողմերը պարտավոր են ծանուցել միմյանց այդ մասին ոչ ուշ, քան 3 (երեք) ամիս առաջ: |
| 9. | ПРОЧИЕ УСЛОВИЯ | ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ |
| 9.1. | Стороны несут ответственность за невыполнение возложенных на них обязательств по организации и проведению практики студентов-практикантов в соответствии с гражданским законодательством Республики Армения. | Կողմերը իրենց վրա դրված ուսանող-պրակտիկանտների պրակտիկայի կազմակերպման և անցկացման պարտավորությունների չկատարման համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: |
| 9.2. | Все споры, возникающие между сторонами по настоящему Договору, разрешаются в установленном порядке, согласно действующему законодательству Республики Армения. | Սույն պայմանագրով Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: |
| 9.3. | Настоящий Договор составлен в 2 (двух) экземплярах, имеющих одинаковую юридическую силу, по одному экземпляру для каждой Стороны. | Սույն Պայմանագիրը կազմված է 2 (երկու) օրինակներից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: |

9.4. Настоящий Договор составлен на русском и армянском языках, оба текста являются равно аутентичными и имеют одинаковую силу.

Սույն Պայմանագիրը կազմված է հայերենով և ռուսերենով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

10. ЮРИДИЧЕСКИЕ АДРЕСА И ПОДПИСИ СТОРОН

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ЗАО «Ереванский коньячный завод»**
**адрес:** РА, г. Ереван, 0082, пр. Адмирала Исакова 2
**телефон:** +374 (10) 510 100
**ИНН:** 01802388
**Р/С:** 217001026269040
**Банк:** ЗАО "ЭЙЧ-ЭС-БИ-СИ БАНК АРМЕНИЯ"
**Эл.почта:** hr_ybc@pernod-ricard.com

Э. Мармарян
**Директор по управлению персоналом**

**«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ**
**Հասցե՝** ՀՀ, 0082, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 2
**Հեռ.՝** (+374 10) 510 100
**ՀՎՀՀ՝** 01802388
**Հ/Հ՝** 217001026269040
**Բանկ՝** «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
**Էլ.փոստ՝** hr_ybc@pernod-ricard.com

Է. Մարմարյան
**Մարդկային ռեսուրսների գծով տնօրեն**

**Филиал Московского государственного университета имени М.В.Ломоносова в г. Ереване**
**Юр. адрес:** РА, г. Ереван, ул. Айгестан, д. 8
**Факт. адрес:** РА, г.Ереван, 0025, ул. Вардананц, д. 17
**телефон:** (+374 11) 900 110
**ИНН:** 02636517
**Р/С:** 220555140064000
**Банк:** ОАО «Акба- Банк»
**Эл.почта:** office@msu.am

П.Д. Сафарян
**Исполнительный директор**

**Երևան քաղաքում Մ.Վ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղ**
**Իրավ. հասցե՝** ՀՀ, ք. Երևան, Այգեստան փ., 8 տ.
**Գործ. հասցե՝** ՀՀ, ք.Երևան, 0025, Վարդանանց փ.,17 շ.
**Հեռ.՝** (+374 11) 900 110
**ՀՎՀՀ՝** 02636517
**Հ/Հ՝** 220555140064000
**Բանկ՝** «Ակբա-Բանկ» ԲԲԸ
**Էլ. փոստ՝** office@msu.am

Պ. Դ. Սաֆարյան
**Գործադիր տնօրեն**